ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«01» ապրիլի 2022 թվականի Nº 252

## ԱԻԴԱ ԱՐԹՈՒՐԻ ՕՀԱՆՅԱՆԻՆ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 129-րդ հոդվածի 1-ին մասով, 130-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի ղեկավարի 2021 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 119 կարգադրությամբ Աիդա Արթուրի Օհանյանին տրամադրվել է հղիության և ծննդաբերության արձակուրդ՝ 2021 թվականի նոյեմբերի 15-ից 2022 թվականի ապրիլի երեքը ներառյալ, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 12-Ա որոշումը, Սպիտակ համայնքի ղեկավարի օգնական-հասարակայնության հետ կապերի պատասխանատուի հաստիքի կրճատմամբ պայմանավորված՝ ***որոշում եմ.***

1. 2022 թվականի ապրիլի 4-ին Սպիտակ համայնքի ղեկավարի օգնական-հասարակայնության հետ կապերի պատասխանատու Աիդա Արթուրի Օհանյանին ազատել աշխատանքից՝ լուծելով նրա հետ 2020 թվականի հունիսի 15-ին կնքած թիվ 1 աշխատանքային պայմանագիրը:

2. Աշխատանքային հարաբերությունների ավարտը համարել 2022 թվականի ապրիլի 3-ը:

3. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ սահմանված կարգով ու ժամկետում հաշվարկել և վճարել վերջնահաշվարկ և արձակման նպաստ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ.ապրիլի ____
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«01» ապրիլի 2022թ. № 253

## «ՍՏԵԼԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՍՅԱՍՈՒՐԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՈՒ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843 որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի և Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 14-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի, հիմք ընդունելով «ՍՏԵԼԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՍՅԱՍՈՒՐԻ» անհատ ձեռնարկատիրոջ 2022 թվականի ապրիլի 1-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ՍՏԵԼԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՍՅԱՍՈՒՐԻ» անհատ ձեռնարկատիրոջը (ՀՎՀՀ 66964777) տալ «ՀՀ Լոռու մարզ, գ. Ղուրսալի 1փ. 4տ» հասցեում գտնվող խանութում (ոչ հիմնական շինություն՝ 26 քառակուսի մետր մակերես) ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն՝ 2022 թվականի 2-րդ եռամսյակի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի 1
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«01» ապրիլի 2022թ. № 254

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՀԱՐՈՆ ՄԱԼԽԱՍՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՈՒ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843 որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի և Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 14-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ահարոն Մալխասյանի 2022 թվականի ապրիլի 1-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Ահարոն Մալխասյանին (ՀՎՀՀ 66833033) տալ «ՀՀ Լոռու մարզ, գ. Սարամեջ, 1փ. 1տ» հասցեում գտնվող խանութում (հիմնական շինություն՝ 41,52 քառակուսի մետր մակերես) ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն՝ 2022 թվականի 2-րդ եռամսյակի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի 01
ք. Սպիտակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

« 04 » ապրիլի 2022թ. № 255

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի բնակիչների դիմումները և սոցիալական հարցերի հանձնաժողովի 2022 թվականի մարտի 29-ի թիվ 3 արձանագրությունը՝ ***որոշում եմ***.

1. Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի «Այլ սոցիալական ծրագրեր» գործառական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման 4729 հոդվածից Սպիտակ համայնքի բնակիչներին հատկացնել դրամական օգնություն ընդամենը 375 000 (երեք հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի 4
ք. Սպիտակ

Հավելված
Սպիտակ համայնքի ղեկավարի
2022թ. ապրիլի 4 -ի թիվ 255 որոշման

Դրամական օգնություն ստացող քաղաքացիների ցուցակ

| Հ/Հ | Անուն, ազգանուն | Սոց. քարտի համարը | Անձնագրային տվյալները | Գումարը ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|
| 1 | Վալյա Վանյան | 6404710307 | 007698632, տրված 18.03.2016թ., 052-ի կողմից | 15 000 |
| 2 | Արևիկ Նավասարդյան | 7608790032 | AN0543233, տրված 02.07.2013թ., 052-ի կողմից | 15 000 |
| 3 | Գարեգին Մարտիրոսյան | 1610750411 | AU0230830, տրված 12.04.2021թ., 052-ի կողմից | 15 000 |
| 4 | Իրինա Մանուկյան | 6403830082 | 002208106, տրված 10.06.2015թ., 052-ի կողմից | 15 000 |
| 5 | Թամարա Հովհաննիսյան | 7101780067 | 008679847, տրված 18.05.2016թ., 052-ի կողմից | 15 000 |
| 6 | Լուդմիլա Սահակյան | 5905520011 | 014042584, տրված 03.03.2022թ., 052-ի կողմից | 15 000 |
| 7 | Ռոբերտ Սահակյան | 3704790052 | 001211408, տրված 01.02.2014թ., 052-ի կողմից | 15 000 |
| 8 | Մարինե Սարաջյան | 7307850346 | AR0279841, տրված 03.05.2017թ., 052-ի կողմից | 15 000 |
| 9 | Մարիամ Այվազյան | 5409810074 | AS0614911, տրված 20.05.2019թ., 052-ի կողմից | 15 000 |
| 10 | Անուշ Շուշանյան | 5204730281 | AU0279449, տրված 21.05.2021թ., 052-ի կողմից | 15 000 |
| 11 | Լովա Սարգսյան | 2008510190 | 004828430, տրված 11.11.2014թ., 052-ի կողմից | 15 000 |
| 12 | Ռուստոմ Նիգոյան | 4010630191 | 003955341, տրված 12.03.2015թ., 052-ի կողմից | 15 000 |
| 13 | Հայկանուշ Պապիկյան | 5205510463 | AM0921745, տրված 01.11.2012թ., 052-ի կողմից | 15 000 |
| 14 | Սպարտակ Աֆրիկյան | 3308600137 | 002440550, տրված 03.04.2014թ., 052-ի կողմից | 15 000 |
| 15 | Ռազմիկ Նիգոյան | 3612530089 | 009303066, տրված 27.01.2018թ., 052-ի կողմից | 15 000 |
| 16 | Տաթևիկ Դավթյան | 5111780270 | AM0883240, տրված 27.09.2012թ., 052-ի կողմից | 15 000 |
| 17 | Թամարա Ամիրյան | 5208830116 | 007511199, տրված 01.12.2015թ., 052-ի կողմից | 15 000 |
| 18 | Արկադի Բադալյան | 2814800221 | AT0344216, տրված 25.12.2019թ., 047-ի կողմից | 15 000 |
| 19 | Վարդանուշ Խաչատրյան | 6308760242 | AT0464024, տրված 23.09.2019թ., 052-ի կողմից | 15 000 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«04» ապրիլի 2022թ. № 256

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-095-0090-0018 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1701938 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06095HXDR8W8) և Լևոն Ջալիկոսի Մխիթարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Լևոն Մխիթարյանին, Լաուրա Ասատրյանին, Արտակ Մխիթարյանին և Արթուն Մխիթարյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրում գտնվող, 06-095-0090-0018 կադաստրային ծածկագրով, 0,156 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, գ. Ջրաշեն, 9-րդ փողոց, 42» հասցեն (փոստային դասիչը՝ 1821):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________________ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի 4
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«04» ապրիլի 2022թ. № 257

## ԿԱՐԵՆ ԱՎԵՏԻՔԻ ԱԿՈՒԼՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳԱԲԱՐ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի Ս. Ավետիսյան փողոցի վրա գտնվող 0,013 հա մակերեսով հողամասը և դրա վրա գտնվող շինությունններն ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2022 թվականի մարտի 15-ի վկայագրով փոխանցվել են Կարեն Ավետիքի Ակուլյանին, սակայն անշարժ գույքի «ք.Սպիտակ, Մարշալ Բաղրամյան փողոց, 1-ին նրբանցք, թիվ 4» հասցեն չի համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներին, հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2022 թվականի մարտի 15-ի վկայագիրը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի առկա հասցեի փոփոխության հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006OEIK8IT) և Կարեն Ավետիքի Ակուլյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Կարեն Ավետիքի Ակուլյանին ժառանգաբար փոխանցված՝ Սպիտակ համայնքի Ս. Ավետիսյան փողոցի վրա գտնվող 0,013 հա մակերեսով հողամասի, դրա վրա գտնվող 68,2 քմ մակերեսով բնակելի տան, 19,8 քմ մակերեսով կաթսայատան, զուգարանի և լոգարանի «ք.Սպիտակ, Մարշալ Բաղրամյան փողոց, 1-ին նրբանցք, թիվ 4» հասցեն փոփոխել «ք.Սպիտակ, Ս. Ավետիսյան փողոց, 1-ին նրբանցք, թիվ 4» հասցեով (փոստային դասիչը 1801):
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի
ք.Սպիտակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

« 04 » ապրիլի 2022թ. № 258

## 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՈՒԵՐԼԻՖՏԻՆԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ, ԵՐԿՐՈՐԴ ԵՎ ԵՐՐՈՐԴ ՊԱՏՎԱՎՈՐ ՏԵՂԵՐԸ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 47-րդ հոդվածի 1-ին մասին 4-րդ կետով, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Մելանյա Դանիելյանի զեկուցագիրը, 2022 թվականի Պաուերլիֆտինգի Հայաստանի առաջնությունում առաջին, երկրորդ և երրորդ պատվավոր տեղերը զբաղեցրած մարզիկներին խրախուսելու նպատակով շնորհակալագրեր ձեռք բերելու համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի «Սպորտային միջոցառումներ» գործառական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 18 600 ՀՀ դրամ:
2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի 4

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ
«05» ապրիլի 2022թ. № 259

# ՏԵՂԱՆՔԻ ԶՆՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ մասով, հիմք ընդունելով Սպարտակ Սեդրակի Կիրակոսյանի 2022 թվականի մարտի 11-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. 2022 թվականի ապրիլի 6-ին ժամը 11:00-ին նշանակել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Լուսաղբյուր բնակավայրի տարածքում գտնվող 06-046-220-010 կադաստրային ծածկագրով հողամասից 6 000 քառակուսի մետր մակերեսով հատվածի տեղանքի զննում:

2. Սույն որոշման 1-ին կետով նշանակված տեղանքի զննումն իրականացնել Սպարտակ Սեդրակի Կիրակոսյանի ներկայությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _______________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի 5
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«05» ապրիլի 2022թ. № 260

# ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25-Ի ԹԻՎ 236 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝ որոշում եմ.

1. Ուժը կորցրած ճանաչել Սպիտակ համայնքի ղեկավարի 2020 թվականի օգոստոսի 25-ի «Սպիտակ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և Սպիտակ համայնքի ղեկավարի 2016 թվականի օգոստոսի 31-ի թիվ 232 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 236 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ __________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի 5
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ
«05» ապրիլի 2022թ. № 261

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1. Ստեղծել Սպիտակ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով հետևյալ կազմով.

Հանձնաձողովի նախագահ՝

Ազգանուշ Ֆրանգյան-Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար.

Հանձնաժողովի քարտուղար՝

Քնարիկ Պետրոսյան - Սպիտակ համայնքի ղեկավարի օգնական.

Հանձնաժողովի անդամներ՝

Արտակ Մաթոսյան – Սպիտակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ.

Նորայր Ցարմալոյան - Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար.

Կարեն Մաթոսյան - Միասնական սոցիալական ծառայության Սպիտակի տարածքային կենտրոնի սոցիալական աշխատանքի և զբաղվածության ծրագրերի բաժնի պետ (համաձայնությամբ).

Բավական Պետրոսյան - «Խնամք» հասարակական կազմակերպության Սպիտակի խնամքի տան պատասխանատու (համաձայնությամբ)».

Անահիտ Հարությունյան - բժիշկ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի 5
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

« 07 » ապրիլի 2022թ. № 262

## ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՐԵՎԱՅԻՆ ՍՆՈՒՑՄԱՄԲ ՀԵՌԱԽՈՍՆԵՐԻ ԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ՏԱՂԱՎԱՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Մելանյա Դանիելյանի զեկուցագիրը, Սպիտակ քաղաքում արևային սնուցմամբ հեռախոսների լիցքավորման տաղավար տեղադրելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» գործառական դասակարգման «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման 4819 հոդվածից հատկացնել 118 500 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ______________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի 7
ք.Սպիտակ